<<Հմուտ ձեռքեր» խմբակի ծրագիր

Digitally signed by GALSTYAN NVER 2708680250
Date: 2023.06.13 11:46:33 AMT

2023-2024 ուստարի

Բացատրագիր

<<Հմուտ ձեռքեր>> խմբակի ծրագիրը ներկայացված է 2–րդ, 3_րդ դասարանների աշակերտների համար , կազմված է ըստ քայլաշարի: Քայլաշարը ընդգրկում է հետևյալ բաժինները.

1.Թեմայի անվանումը, ժամաքանակը

2.նպատակները

3.խնդիրները

4.վերջնարդյունքները

5.բովանդակությունը

6.պահանջվող նյութատեխնիկական բազան

7.օգտագործվող գրականության ցանկը

Ծրագրում ներառված են թեմաներ , որոնք համապատասխանեում են սովորողների նախասիրությունների, հետաքրքրությունների և պահանջմունքների բավարարմանը: Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը ,նպատակը, ակնկալվող վերջնարդյունքները `հիմնական շեշտը դնելով աշակերտների գեղագիտական, ստեղծագործական կարողությունների և հմտությունների զարգացման վրա:

Կազմող՝ Գեղարքունիքի մարզի Ծովազարդ գյուղի միջնակարգ դպրոցի դասվար՝

Նարինե Ալբերտի Խաչատրյան

# «ՀՄՈՒՏ ՁԵՌՔԵՐ»

## Ծրագիր

Շաբաթական 2 ժամ, տարեկան 64 ժամ

### Նպատակը

●Սովորեցնել մտածել, վերլուծել, առաջադրել նոր մտահղացումներ, ստեղծագործաբար մոտենալ բոլոր առաջադրանքների կատարմանը, գնահատել գեղեցիկը

●Զարգացնել և մարզել երևակայությունը, հաստատակամությունը և ձեռքերի նուրբ շարժիչ հմտությունները

●Երևակայության և ստեղծագործական կարողությունների զարգացում

●Հորինվածք ստեղծելու կարողությունների ձևավորում

### Խնդիրները

●Հետաքրքրություն առաջացնել խմբակի նկատմամբ

●ստեղծել ուրախ և հաճելի միջավայր

●զարգացնել գեղագիտական ճաշակ

●զարգացնել տարածալան պատկերացումներ և ճանաչողական հմտություններ

### Վերջնարդյունքներ

Կմասնակցեն միջավայրի գեղագիտական ձևավորումներին

Կդրսևորի գեղեցիկը ընկալելու կարողություն

.Ակտիվ և պատրաստակամ կմասնակցի խմբակների

.Կզարգանա երևակայությունը, ազատ ստեղծագործելու կարողությունը, համագործակցությունը

Ստացած գիտելիքների և կարողությունների ստեղծագործաբար և հմտորեն կիրառելու հմտություն

## Բովանդակություն

## Գունավոր թղթերի կախարդական աշխարհը (16 ժամ)

1. Պատկերներ գունավոր թղթից կտրված մանկական ափերով (ծառ, թիթեռ…)(1ժամ)

2. Նախշեր երկրաչափական պատկերներով (1 ժամ)

3-4Պատկերներ գունավոր թղթի ակորդեոններից ( հովհար, զատիկ, ծաղկեփունջ) (2 ժամ)

5-6Գունավոր թղթի բարակ շերտերը մատիտի օգնությամբ գլորելով ստեցծել թեմատիկ պատկեր ( գարուն, անտառ և այլն) (2ժամ)

7-8. Ծավալային պատկերներ գունավոր թղթից (ծաղիկներ, նավակ, թռչուն...) (2 ժամ)

9-10Գունավոր թղթից ծաղկեպսակներ (2 ժամ)

11-12Թղթե օղակներով աշխատանքներ (օձեր, շղթաներ, գառնուկ...) (2 ժամ)

13-14Թղթե բացիկներ (2 ժամ)

15-16 Օրիգամի՝ թուղթը ծալելու պարզ սխեմաներով ստանալ պատկերներ (ծաղիկ, փաթիլ, թիթեռ, թռչուն...) (2 ժամ)

## Աշխատանք տարբեր նյութերով (20 ժամ)

## Նպատակը

Զարգացնել գեղագիտական ճաշակ

Ստեղծագործական կարողությունների և հմտությունների զարգացում

## Խնդիրները

.Զարգացնել ինքնուրույն լուծումներ գտնելու տարբերակներ

Լավն ու գեղեցիկը ընկալելու կարողություններ

## Վերջնարդյունքներ

. Համարձակ  կարտահայտեն իրենց տեսակետը `հիմնավորելով և ապացուցելով սեփական կարծիքն ու որոշումը

. Կտիրապետեն ինքնուրույն աշխատելուն, գեղագիտական լուծումներ գտնելուն

Հետաքրքրություն կցուցաբերեն պարզ և ծանոթ նյութերով բազմազան իրեր պատրաստելուն

## Բովանդակությունը

17-18-19.Գույնզգույն տերևների պարը՝ տերևներից կենդանիներ, վառ լանդշաֆտներ, գեղեցիկ նախշերի պատրաստում (3 ժամ)

20-21 Պատկերներ թղթե անձեռոցիկներով՝ «Զվարճալի գառնուկ», «Ծաղկեփունջ» (2 ժամ)

22-27.Մոզաիկա տարբեր նյութերով (6 ժամ)

28-32Աշխատանք եղևնու կոներով (5 ժամ)

33-36Աշխատանք գործվածքներով, կոճակներով և ժապավեններով (4 ժամ)

## Աշխատանքներ փայլաթիթեղով (10 ժամ)

## Նպատակը

Զարգացնել շարժիչ հմտություններ և հաստատակամություն Ծանոթանալ փայլաթիթեղի

հատկություններին

## Խնդիրներ

Յուրացնել գույների և ձևերի աշխարհը

Կարողանալ հետաքրքիր և ինքնատիպ լուծումներ գտնել

Զարգացնել այլընտրանքային մտածողություն

## Վերջնարդյունքներ

Կարողանալ փայլաթիթեղից պատրաստել տարբեր առարկաներ՝  զարդեր, խաղալիքներ և այլն։

Ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները կիրառել կենցաղում

Նախասիրությունները դարձնել նաև մասնագիտություն

## Բովանդակություն

37-38Տոնածառի զարդարանքների պատրաստում (2 ժամ)

39-40“Արծաթյա զարդեր”( փայլաթիթեղով, կոճակներով, ուլունգներով…) (2 ժամ)

41-42Զյան փաթիլի պատրաստում (2 ժամ)

43-44Նախշեր փայլաթիթեղյա ծաղիկներից (2 ժամ)

45-46 Հատապտուղների, մրգերի, կենդանիների և այլնի եռաչափ պատկերներ. (2 ժամ)

## Ինչեր կարելի է պատրաստել անպետք առարկաներից (18 ժամ)

### Նպատակը

Ստեղծագործական ներուժի ակտիվացման, աշխատանքի պլանավորման, արդյունքների ստացման կարողությունների ձևավորում

Երևակայության և ստեղծագործական կարողությունների զարգացում

### Խնդիրները

1.Ստեղծել միջառարկայական կապ ես և շրջակա աշխարհը առարկայի հետ

2.Խնամք, հոգատարություն շրջակա միջավայրի նկատմամբ

### Վերջնարդյունքներ

Կընդլայնեն միջառարկայական մտահորիզոնը՝ այլ գիտությունների մեջ

Կձևավորվի խնայողական վերաբերմունք բնական պաշարների հանդեպ

## Բովանդակություն

47-48Ծաղկամաններ պլաստիկե շշերից (2 ժամ)

49-50Ծաղիկներ պլաստիկե շշերից (2 ժամ )

51-54Խաղահրապարակի խաղալիքներ և զարդեր (4 ժամ)

55-56Գրիչների և մատիտների ամաններ (2 ժամ)

57-58Սածիլների համար տնկարաններ( 2 ժամ)

59-60Զարդեր պահելու դարակներ(2 ժամ)

61-62Մեկանգամյա օգտագործման պլաստիկե բաժակներով պատրաստել ձնեմարդ (2 ժամ)

63-64 Պատրաստած իրերի ցուցահանդես(2 ժամ)

## Պահանջվող նյութատեխնիկական բազան

Գույնզգույն թղթեր, ստվարաթուղթ, սոսինձ, մկրատ, գույնզգույն տերևներ, եղևնու կոներ, տարբեր գործվածքների կտորներ, փայլաթիթեղներ, պլաստիկե շշեր, կոճակներ և այլն:

## Օգտագործվող գրականության ցանկը,հղումներ

https://youtube.com/watch?v=G7esVyRv9Sw&feature=share

https://youtube.com/watch?v=zKSqE34wE8I&feature=share